ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 19

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը գույք նվիրելու մասին:

2. Զորավան համայնքի 2014 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրին գումար հատկացնելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Զորավան համայնքի սեփականություն համարվող հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 20

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդված 1-ին մասի 20-րդ կետի և 41-րդ հոդվածի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը նվիրել ձեռք բերված.

1) Ձայնա-տեսագրության և վերարտադրության սարքավորումը 145000 (մեկհարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ արժողությամբ,

2) Համակարգիչը 174000 (մեկ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ արժողությամբ,

3) Գորգը 180000 (մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ արժողությամբ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱՐՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 21-Ն

## ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Զորավան համայնքի 2014 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից 500.0 հազար դրամ հատկացնել «Սոցիալական հատուկ արտոնություններ» (բաժին 10, խումբ 7, դաս 1) նախահաշվի «4729» հոդվածին, 240.0 հազար դրամ հատկացնել «Սոցիալական հատուկ արտոնություններ» (բաժին 10, խումբ 7, դաս 1) նախահաշվի «4726» հոդվածին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱՐՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՍԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, 0224 6-28-81 zoravan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 22-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Զորավան համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն աղյուսակի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՔԱՋԻԿ
4. ՂԱՎԱԼԲԱՐՈՒՆՑ ԿԱՌԼԵՆ
5. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Աղյուսակ 1

## Գյուղատնտեսական նշանակության հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական նշանակության հող | գ. Ձորավան | 07-031-0240-0008 | 14.5526 | գյուղատնտեսական | II կարգ անջրդի | Վարելահող, Այլ հող | 7305800 | չկան |
| 2 | Գյուղատնտեսական նշանակության հող | գ. Ձորավան | 07-031-0240-0007 | 10.0 | գյուղատնտեսական | II կարգ անջրդի | Վարելահող | 5320000 | չկան |

Համայնքի ղեկավարի աշխատակազմի

քարտուղար